ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ
Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ (ՔԴՔԿ)

Հայաստանյայց Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Քրիստոնեական Դաստիա-բակության և Քարոզչության Կենտրոն ստեղծելու գաղափարը ծնունդ է առել Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա նախագահությամբ գումարված Եպիսկոպոսաց ժողովի ընթացքին 1992 թվականի Սեպտեմբերի 29-ին Ս. Էջմիածնում:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Հայ Եկեղեցու Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնը (հետագայում՝ Կենտրոն) հիմնադրվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրամանով:

1.2 Կենտրոնն առաջնորդվում է Հայ Եկեղեցու Կանոնագրությամբ, Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հրամանագրերով, ներկա Կանոնադրությամբ ինչպես նաև ՀՀ գործող օրենսդրությամբ:

1.3 Կենտրոնն ունի իր անվանումով կնիք, դրոշմակնիք, տիտղոսաթերթ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ենթահաշվարկային հաշիվ:

1.4 Կենտրոնի լրիվ անվանումն է.

Հայերեն- ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Անգլերեն- CENTRE FOR CHRISTIAN EDUCATION AND MISSIONS OF THE ARMENIAN APOSTOLIC ORTHODOX CHURCH

digitised by A.R.A.R.@

Ռուսերեն- **ЦЕНТР ПРОПОВЕДНИЧЕСТВА И ХРИСТИАНСКОГО ВОСПИТАНИЯ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ПРАВОСЛАВНОЙ СВЯТОЙ ЦЕРКВИ**

1.5 Կենտրոնի հասցեն է. Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Հայաստանի Հանրապետություն:

2. ԿԵՆՏՐՈՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Համակարգված կերպով ծրագրել և Հայ Եկեղեցու դավանանքի և ոգու համաձայն կյանքի կոչել Ավետարանի, Աստվածաբանական, կրոնական, ծիսական, եկեղեցագիտական գիտելիքների ու դրույթների տարածումը:

2.2 Քրիստոնեության հետագա տարածման և ամրապնդման նպատակով կազմակերպել Քրիստոնեական քարոզչություն և իրագործել դրանց ծրագրային խնդիրներն ու նպատակները:

2.3 Ազգաբնակչության լայն շրջանակներին ու խավերին հասցնել Հայ Եկեղեցու պատմությունը:

2.4 Հանրությանը հասցնել աղանդավորական, և այլ կրոնական գաղափարախոսությունների ակունքներն ու նպատակները և դրանց անհամատեղելիությունը Հայ Եկեղեցու առաքելության հետ:

2.5 Կազմակերպել ազգաբնակչության, այդ թվում մանուկների, պատանիների և երիտասարդության կրոնական կրթության ու դաստիարակության համակարգված աշխատանք:

2.6 Հատուկ ուշադրությամբ հետևել աշխատողների սրակավորման և մասնագետների պատրաստման ծրագրերի իրականացմանը:

2.7 Սատարել Հայ Եկեղեցու տարբեր թեմերում գործող տեղական ուժերի ու կառույցների զարգացմանը:

2.8 Օժանդակել նաև թեմական Քրիստոնեական Դաստիարակության հանձնախմբերի տեղական բնույթով ծրագրերի իրագործմանը:

2.9 Հաստատել աղբյուրագիտական-հետազոտական գրասենյակ, որն զբաղվելու է զանազան կրոնա-եկեղեցական թեմաների մշակմամբ և ուսումնասիրությամբ, վիճակագրական տվյալների հավաքմամբ և վերլուծմամբ, մատենագիտական ցուցակագրմամբ:

digitised by A.R.A.R.@

2.10 Հեռանկարային և համապարփակ վերլուծության ենթարկել աշխարհասփյուռ Հայ Եկեղեցու ներկայի և ապագայի կարևորագույն հոգևոր կարիքները: Ըստ այդմ մշակել համակարգված ծրագրեր՝ ոչ միայն քարոզչական-դաստիարակչական աշխատանքների ի խնդիր, այլ և հաստատելու և ամրապնդելու այն կառույցները և զարկ տալու այն գործընթացներին, որոնք ապագային պիտի սատարեն Հայաստանյայց Եկեղեցու ծաղկմանը և հզորացմանը:

3. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Իրականացնում է քարոզություն համաձայն Հայ Եկեղեցու վարդապետության: Այդ նպատակով.

3.1 Կազմակերպում է Ս. Գրոց ուսուցում հրատարակությունների և կենդանի քարոզչության միջոցով:

3.2 Մշակում և կազմակերպում է լսարանային հաղորդումներ, հաղորդաշարեր, դասախոսություններ, ռադիոյի, հեռուստատեսության և այլ լրատվական միջոցներով:

3.3 Կիրակնօրյա վարժարանների, նախադպրոցական հիմնարկների, հանրակրթական դպրոցների, բարձրագույն ուսումնական հաստատությունների համար պատրաստում և վերապատրաստում է կրոնի ուսուցիչներ:

3.4 Մշակում և կազմակերպում է հոգևորականների համար դասընթացներ:

3.5 Մշակում և պատրաստում է կրթական ծրագրեր ու դասագրքեր:

3.6 Իր նպատակների իրագործման համար հարաբերություններ է հաստատում ու մշակում Քույր Եկեղեցիների, կրոնական կազմակերպությունների, պետական և ոչ-պետական, հաստատությունների հետ:

3.7 Կազմակերպում է համագործակցված և համատեղ աշխատանք Հայ Եկեղեցու թեմերի Քրիստոնեական դաստիարակության և Քարոզչության Գրասենյակների հետ:

3.8 Հովանավորում, կազմակերպում և կառավարում է Էջմիածին քաղաքի Կիրակնօրյա վարժարանները:

4. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

4.1 Կենտրոնի գործունեությունը ղեկավարում է Կենտրոնի Խորհուրդը, որ, ենթակա է Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

digitised by A.R.A.R.@

4.2 Կենտրոնի Գործադիր ղեկավարը Կենտրոնի Գործադիր տնօրենն է:

4.3 Կենտրոնի Խորհրդի և Գործադիր տնօրենի գործունեությունները իրականացվում են Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հաստատված առանձին Կանոնակարգի համապատասխան:

4.4 Կենտրոնի կազմակերպչական կառուցվածքը նախատեսում է հետևյալ ստորաբաժանումները.

- Քարոզչության բաժին

- Ուսումնակրթական բաժին՝ երեք ենթաբաժիններով.
  ա. Ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման
  բ. Հոգևորականների դասընթացների.
  գ. Կրթական ծրագրերի և դասագրքերի պատրաստման

- Կապերի և հարաբերությունների բաժին՝ չորս ենթաբաժիններով.
  ա. Թեմերի Քրիստոնեական Դաստիարակության Գրասենյակների հետ
  բ. Քույր եկեղեցիների հետ
  գ. Պետական և ոչ պետական հաստատությունների հետ
  դ. Մամուլի և լրատվության միջոցների հետ

- Հետազոտական Գրասենյակ.
- Կենտրոնի գրասենյակ.

4.5 Կենտրոնի Խորհրդի նախագահը, Խորհրդի անդամները և գործադիր տնօրենը նշանակվում են Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հրամանագրով:

4.6 Կենտրոնի ստորաբաժանումների պաշտոնյաները աշխատանքի են նշանակվում և ազատվում Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հրամանագրով՝ Կենտրոնի Խորհրդի ներկայացմամբ: Կենտրոնի հոգևորական պաշտոնյաները չեն վարձատրվում բացի այն պարագայից երբ հոգևորականը միայն այս մեկ պաշտոնն է կատարում:

4.7 Խորհուրդը նշանակում է ուսուցիչները որակավորող Հանձնախումբ ընելու և վկայելու համար ուսուցիչների արժանավորությունը:

4.8 Թեմերի Քրիստոնեական դաստիարակության և Քարոզչության գրասենյակների գործունեությունը իրականացվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հաստատված առանձին Կանոնակարգի համապատասխան:

digitised by A.R.A.R.@

5. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ

5.1 Կենտրոնի գույքը և միջոցները հանդիսանում են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի սեփականությունը:

5.2 Կենտրոնի գույքը և միջոցները առաջանում են.

- Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հատկացումներից.
- Հայ Եկեղեցու Թեմերի ֆինանսական աջակցություններից.
- Անհատների բարեգործական և այլ կազմակերպությունների նվիրատվություններից և իրավաբանական անձանց կողմից կատարվող մուտքերից:

6. ԿԵՆՏՐՈՆԻ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

6.1 Կենտրոնի լուծարվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հրամանագրով:

6.2 Կենտրոնի լուծարումից հետո, Կենտրոնի գույքը և միջոցները, ինչպես նաև գործունեության փաստաթղթերը հանձնվում են Ամենայն Հայոց Կաթողիկոսին կամ նրա կողմից լիազորված մարմնին:

digitised by A.R.A.R.@